ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԱՀԱԳՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
vah.hakobyan@gmail.com
ՀՏԴ 94 (479.25)

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ XVIII ԴԱՐԻ 2 -ՐԴ ԿԵՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁՈՒՄ

Բանալի բառեր. գործունեություն, տիրակալ, պատերազմ:
Ключевые слова: деятельность, правитель, война.
Keywords: activity, ruler, war.

Նադիր շահի սպանությունից հետո Իրանում ուժեղ կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում Այսրկովկասի խանություններն ու մելիքությունները, այդ թվում Երևանի խանությունը, կիսանկախ կարգավիճակ ձեռք բերեցին: Երևանի խանությունը տարածաշրջանի հարուստ տիրույթներից էր, և շատ նվաճողներ ձգտում էին տիրել դրան: Նման հանգամանքներում Էջմիածնի կաթողիկոսները, գործ ունենալով տարբեր տիրակալների հետ, պետք է գործեին ակտիվ և ճկուն կերպով՝ հայությանը խառնակ ժամանակաշրջանում ավերից զերծ պահելու համար: Սույն հոդվածում կներկայացնենք վերոնշյալ ժամանակաշրջանում Էջմիածնի կաթողիկոսների գործունեությունը և նրանց հարաբերությունները խանությունն իրենց ենթարկած տարբեր տիրակալների հետ:

1749-1755թթ.-ին Երևանն արտաքին ուժերի պայքարի առարկա է դառնում: Նման հանգամանքներում Էջմիածնի կաթողիկոսներին անհրաժեշտ էր ակտիվ գործունեություն ծավալել իրենց կալվածքներն ու հարկային արտոնությունները պահպանելու համար: Էջմիածնի կաթողիկոսները նախևառաջ փորձում էին Երևանում իշխող և նրա նկատմամբ հավակնություններ հանդես բերող տիրակալներից ձեռք բերել վերոնշյալ իրավունքները հաստատող հրամանագրեր: Իրանի գահին հավակնողներից մեկն Ազատ խանն էր, ով փորձում էր հպատակեցնել Հարավային Կովկասի շրջանները. մասնավորապես Երևանի խանությունը: 1751թ.-ին Ազատ խանի Երևան արշավելու ժամանակ Երևանի խանը օգնության խնդրանքով դիմում է վրաց

թագավոր Հերակլ Բ-ին՝ վերջինիս հարկատու դառնալու պայմանով:[1] Այդ ժամանակից սկսած Հերակլ Բ-ի և Ազատ խանի միջև սուր պայքար է ծավալվում Երևանին տիրելու համար: 1755թ.-ից Երևանը վերջնականապես դուրս է գալիս Ազատ խանի ազդեցությունից՝ հետագայում անցնելով Հերակլ Բ-ի ազդեցության ներքո:

Ազատ խանը 1752 թ.-ի մայիսին արձակած հրամանագրով Մինաս կաթողիկոսին (1751-1753թթ.) տեղեկացնում է, որ Մելիք Հակոբջանի[2] միջոցով նրա խնդրանքը ստացել է և «Երևանի բնակչության անդորրն ապահովելու համար Երևանի բեկլարբեկ է նշանակել Խալիլ բեկին՝ հանձնարարելով նրան լավ վարվել Երևանի բնակչության հետ:[3] Այնուհետև 1755 թ.-ի սեպտեմբերին մեկ այլ հրամանագրով Ազատ խանը Երևանի բեկլարբեկին և մյուս պաշտոնյաներին հրահանգում է, որ ընդառաջելով Ալեքսանդր կաթողիկոսի (1754-1755թթ.) խնդրանքի՝ այն հարկերը, որոնք նախկինում կրճատվել էին, այժմ ևս չգանձվեն:[4] Այսպիսով մի քանի տարի իշխելով Երևանում՝ Ազատ խանը հաստատում է Էջմիածնի կաթողիկոսների կաթողիկոսական իրավունքները և հարկային արտոնությունները: 1755 թ.-ից Ազատ խանի իշխանությունը Երևանում վերանում է: Երևանի բեկլարբեկ է դառնում Հասան Ալի խանը, ում օրոք էլ Երևանի խանությունը դառնում է վրաց Հերակլ Բ (1744-1798թթ.) թագավորի հարկատուն:[5] Սույն ժամանակաշրջանում Քերիմ խանը, ով կարողացել էր իր իշխանության ներքո միավորել Իրանի մեծ մասը, ցանկանում էր իր ազդեցությունը տարածել նաև Երևանի խանությունում՝ միաժամանակ խուսափելով Հերակլ Բ-ի հետ ակնհայտ առճակատման գնալուց: Քերիմ խանը հաստատում է Սիմեոն կաթողիկոսի (1763-1780թթ.) կաթողիկոսական և Էջմիածնի իրավունքները ձևակերպված տասնչորս կետերով: [6] Սիմեոն

---

[1] Բարոն Օ. Հակստհաուզենի ճամփորդությունից մի գլուխ, Կռունկ հայոց աշխարհին, Տփխիս 1862թ., էջ 278:

[2] Մելիք Հակոբջանը Երևանի նշանավոր հայ մելիքներից էր, ով մելիք Մկրտումի հետ իր կալվածքներին և հարկային արտոնություններին վերաբերվող իրավունքները ստացել էր Նադի շահի հրովարտակով: Տես Հայոց պատմություն, հտ. երրորդ, նոր ժամանակաշրջան (17-րդ դարի երկրորդ կես – 1918), գք. Առաջին (17-րդ դարի երկրորդ կես – 19-րդ դարի վերջ), Երևան, 2010, էջ 58:

[3] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1326:

[4] Նույն տեղում, վավ. 1339:

[5] **Ե. Շահազիզ,** Հին Երևանը, Երևան 1931թ., էջ 109-110:

[6] **Ք. Կոստիկյան**, նշվ. աշխ., էջ 91: Քերիմ խանի այս հրովարտակում թվականը ջնջված է, սակայն այն ձեռք բերող Սիմեոն Երևանցու վկայության համաձայն

Երևանցին, կարևորելով Քերիմ խանի դերը տարածաշրջանում, ցանկանում էր, իր կաթողիկոսական իրավունքները հաստատված տեսնել նաև վերջինիս կողմից:[7]

Միաժամանակ Հերակլ Բ-ը, հաշվի առնելով հայոց կաթողիկոսի հեղիակությունը հայության շրջանում և նրա հետ բարյացակամ փոխհարաբերությունների կարևորությունը, հատուկ հրովարտակով Թիֆլիսում բնակվող էջմիածնահպատակ ճորտերին ազատել էր հարկերից:[8] Էջմիածնի ճորտերի կարգավիճակը բավականին տարբերվում էր վրաց թագավորի ճորտերի կարգավիճակից: Թերևս դա էր պատճառը, որ Էջմիածնի ճորտերի շարքում կային նաև հարուստ և հարգարժան մարդիկ:[9]

Երևանի խանության Վրաստանին հարկատու դառնալուց հետո էջմիածնի դրությունը փոքր-ինչ բարելավվեց:[10] Նման պայմաններում Սիմեոն Երևանցին սկսեց քայլեր ձեռնարկել նախկինում Էջմիածնին պատկանած կալվածքները վերադարձնելու ուղղությամբ: Երբ Սիմեոն Երևանցին կաթողիկոս դարձավ, միայն Վաղարշապատն էր մնացել Էջմիածնին: Մնացած բնակավայրերը զավթվել էին խաների և բեկերի կողմից: 1760 թ.-ին Ալեքսանդր վարդապետ վանահայրը կաթողիկոս Հակոբ Շամախեցուց գաղտնի Մուղնի գյուղի մուլքն տալիս է Հուսեյն Ալի խանի ոստիկանապետ Իբրահիմ աղային, որ վերջինս անհրաժեշտության պահին օգնական և պաշտպան լինի նրան: 1768 թ-ին Սիմեոն Երևանցին իմանում է այս անօրինական գործարքի մասին և ետ

հրատարակվել է հիջրայի 1177թ.-ին, որը համապատասխանում է 1763-1764թթ.-ին: Սակայն Քերիմ խանի նույն բովանդակությամբ մեկ այլ վավերագիր թվագրված է հիջրայի 1763թ.-ի ապրիլով, այսինքն Սիմեոն Երևանցու մոտ նշվող տարեթվից մեկ տարի առաջ: Տես՝ ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1354

[7] Քանի որ Քերիմ խանի իշխանությունը տարածվում էր Իրանի մեծ մասում, ապա Էջմիածնի նկատմամբ նրա բարյացակամ վերաբերմունքը կարևոր էր նաև Իրանից Էջմիածնին կատարվող նվիրատվությունների անարգել իրականացման տեսանկյունից: Քերիմ խանի այս հրովարտակը առավել մանրամասն տես **Ք. Կոստիկյան**, նշվ. աշխ., էջ 91:

[8] **Վ. Գրիգորյան,** Դիվան հայոց պատմության, նոր շարք, գք. առաջին, Ղուկաս Կարինեցի, հտ. Ա, 1780-1785, էջ 75:

[9] **Б. Арутюнян**, Крупное монастырское хозяйство в Армении В 17-18 в.в., Ереван, 1940., с. 96.

[10] **А. Иоаннесян**, Иосиф Эмин, Ереван, 1945, с. 67.

է ստանում այդ գյուղը որպես վանքի սեփականություն:[11] Հուսեյն Ալի խանը Էջմիածնից խլել էր նաև Ֆռանկանոց գյուղը: Նա Հակոբ Շամախեցի կաթողիկոսի առաջ պայման էր դրել, որ հայերով կբնակեցնի Ֆռանկանոցը, պայմանով, որ մուլքի կեսը վերցնի իրեն: Խանը ստիպել էր կաթողիկոսին համաձայնվել և գյուղի ամբողջ մուլքը վերցրել էր ու էջմիածնին ութ տարի ոչինչ չէր տալիս: Սակայն Սիմեոն Երևանցին կարողանում է մուլքի կեսը՝ երեք դանկ[12] մուլքը, վերցնել վանքին:[13] Վանքապատկան հողերն ավելացան նաև ի հաշիվ նվիրատվությունների:

Դառնալով վրաց թագավորների հարկատուն՝ Երևանի խաներն այնուամենայնիվ ամեն կերպ փորձում էին խուսափել վրաց թագավորներին կանոնավոր կերպով հարկ վճարելուց: Հասան Ալի խանին հաջորդում է իր եղբայր Հուսեին Ալի խանը(1759-1783թթ.), ով պարբերաբար փորձում էր խուսափել Հերակլ Բ-ին սահմանված չափի հարկ վճարելուց: Հայտնի են դեպքեր, երբ խանը, հարկը ժամանակին չվճարելով, 1000 ձմերուկ է ուղարկում Վրաստան՝ խնդրելով ներել իրեն հարկի վճարումն ուշացնելու համար, [14] Հերակլ Բ-ի կնոջը տարբեր չափի գումարներ՝ 400 թավրիզի թուման,[15] մեկ այլ դեպքում 200 թավրիզի թուման է ուղարկում՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով կատարելու ցանկացած տիպի ծառայություն:[16] Հերակլ Բ-ն իր հերթին փորձում էր տարբեր մեթոդներ բանեցնելով Երևանի խաներից ստանալ իրեն հասանելիք գումարը. երբեմն իր պարտատերերին վճարելու փոխարեն Երևանի խանից համապատասխան գումարը վերցնելու փոխզիր էր տալիս:[17] Խանի հարկատվությունից խուսափելը

---

[11] **Հ. Շահխաթունյանց**, Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, հտ. 1, Էջմիածին, 1842, էջ 135:

[12] Մեկ գյուղի ամբողջական մուլքը հաշվվում էին 6 դանգ (նույն դակն է), հետևաբար 3 դակը կազմում էր գյուղի կես մուլքը: Մանրամասն տես՝ **Ք. Կոստիկյան**, նշվ. աշխ., էջ 103:

[13] **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, Էջմիածին, 1873, էջ 113-114:

[14] ՄՄ, արաբատառ ձեռագիր, թ. 233, էջ 37բ :

[15] Նույն տեղում, էջ 38բ:

[16] Նույն տեղում, էջ 59ա:

[17] Այսպես Հերակլ Բ-ը վարվեց տպագրիչ Պողոս Հովհաննիսյանի դեպքում, ով Թիֆլիսում տպարան էր հիմնադրել և Հերակլ Բ-ը, չվարձատրելով նրան, 400 թումանի փոխզիր տվեց, որպեսզի նա այդ գումարը վերցնի Երևանի խանից: Տես **Ս. Ճեմճեմեան,** Տպագրիչ Պողոս Արապեան և Հերակլ Բ. Վրաց թագավորը, Բազմավեպ, 1978, թ. 1-2, Վենետիկ, Սուրբ Ղազար, էջ 84:

երբեմն հանգեցնում էր Հերակլ Բ-ի կողմից պատժիչ արշավանքի իրականացմանը, որոնց միջոցով Հերակլ Բ-ն վերականգնում էր ազդեցությունը Երևանի խանությունում: Մեծ նշանակություն ունի Սիմեոն Երևանցու և նրա հաջորդ Ղուկաս Կարնեցու կատարած միջնորդական գործունեությունը Երևանի խաների և վրաց թագավորների հարաբերություններում: Հերակլ Բ-ի այդ արշավանքները կատարվել են 1765 և 1779 թթ.-ին: Հերակլի 1765 թ.-ի արշավանքը արյունալի հետևանքներ չի ունենում: Սիմեոն կաթողիկոսի միջնորդությամբ առանց մարտերի Հերակլ Բ-ը համաձայնում է Երևանի խանության իրեն հարկատու վիճակը պահպանվելու պայմանով դադարեցնել արշավանքը:[18] Այս արշավանքից հետո Հերակլի Բ-ին հարկատու դարձան նաև Երևանի խանության տարածքում ապրող քրդերը, որոնց առաջնորդ Սուլեյմանի դստեր հետ ամուսնացած էր Երևանի Հուսեյն Ալի խանը: Սուլեյմանի գլխավորությամբ քրդերը պարբերաբար ավերիչ արշավանքներ էին կատարում Կարսի, Բայազետի և այլ շրջաններում: Ղազախի գյուղերը ավերելու և մարդկանց կոտորելու ժամանակ քրդերը սպանում են ղազախցիների առաջնորդ Ջաֆար յուզբաշու որդուն:[19] Հերակլ Բ-ի արշավանքի ժամանակ քրդերը խուսափում են վերջինիս հետ բախումից, անցնում են Եփրատ գետը՝ հեռանալով Երևանի խանության տարածքից: Երևանի խանը, Հերակլ Բ-ի հետ հարաբերությունները կարգավորելուց հետո, դիմում է Սիմեոն Երևանցուն, որպեսզի վերջինս միջնորդի Հերակլ Բ-ի մոտ իր աներոջ՝ Սուլեյմանի համար: Սիմեոնի միջնորդությամբ Հերակլ Բ-ը թույլ տվեց քրդերին Սուլեյմանի գլխավորությամբ վերադառնալ:[20] Դառնալով Հերակլ Բ-ի հարկատուն՝ քրդերը հետագայում՝ 1767 թ.-ին և 1769 թ.-ին հարկ չվճարեցին Հերակլ Բ-ին, ինչին հաջորդեց վերջինիս պատժիչ արշավանքը քրդերի դեմ:[21]

Որոշ ժամանակ անց Հուսեյն Ալի խանը կրկին հրաժարվում է Հերակլ Բ-ին տարեկան 3000 թուման[22] հարկ վճարել:[23] Հերակլ Բ-ը

---

[18] **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը (1500-1800թթ.), Երևան, 1971, էջ 111:

[19] **Գ. Ավագ քահանա Աղանեանց**, Դիվան Հայոց պատմության, գք. Գ, Թիֆլիս, 1894, Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան, էջ 195:

[20] Նույն տեղում, էջ ՃՁԴ:

[21] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Գ, Երևան, 1955, էջ 175-176:

[22] Ամենայն հավանականությամբ այստեղ խոսքը թավրիզի թումանի մասին է քանի որ սովորաբար վրացական արքունիք ուղարկվելիք գումարը Երևանի խաները

Հուսեյն Ալի խանին պատժելու համար 1778թ.-ին զորքով արշավում է Երևանի վրա: Սակայն Երևանի բերդ չհասած՝ կաթողիկոս Սիմեոն Երևանցու միջնորդությամբ արշավանքը դադարեցվում է՝ իր պահանջը խանի կողմից կատարելու խոստման դիմաց: Սակայն խանը չի կատարում իր խոստումը և չի վճարում հարկը: Հուսեյն Ալի խանը փորձում էր օգտագործել Հերակլ Բ-ի և Քերիմ խանի մեջ եղած հակասությունները և խուսափել կանոնավոր հարկատվությունից: Սակայն իրադրությունը փոխվեց 1779 թ.-ին Քերիմ խանի մահվանից հետո և Հերակլ Բ-ը, իրեն ավելի ազատ զգալով, իր որդի Լևոնի հետ արշավում է Երևանի վրա:[24] Խանը, լսելով Հերակլ Բ-ի արշավանքի մասին, խնդրում է Սիմեոն Երևանցուն միջնորդել: Սակայն այս անգամ Հերակլ Բ-ը վճռական էր տրամադրված և կաթողիկոսի միջնորդությունները չեն օգնում: Խանը փորձում է հաշտության գնալ Հերակլ Բ-ի հետ՝ խոստանալով նրան տալ 4000 թուման և այլ նվերներ: Սակայն վրաց արքան չի համաձայնվում:[25] Ութ հայկական հարուստ գյուղերի բնակիչներ, թողնելով իրենց տները, խանի հորդորով անցնում են Բայազետ:[26] Հերակլ Բ-ը չի կարողանում գրավել Երևանի բերդը: Նա դիմում է Սիմեոն Երևանցուն և ասում, որ հաղորդի Բայազետ գնացած հայերին, որ Հերակլ Բ-ը նրանց չի սպառնում և նրանք կարող են ետ վերադառնալ: Սակայն վերջինս դրժում է իր խոստումը և իրենց բնակավայրեր վերադարձած հայերին գերեվարում ու տանում է Թիֆլիս: Հայտնի են նաև վերոնշյալ գյուղերն, ինչպես նաև դրանց մի մասի մելիքները: Դրանք են Հախուեսը - մելիքը՝ Բալասանը, Բլուրը - մելիքը՝ Մինասը, Ալեթլու և Էվճիլար գյուղերը: Այս գյուղերը Արաքսից արևմուտք էին, իսկ դեպի արևելք՝ Քեալակարխուն – մելիքը՝

հաշվում էին թավրիզի թումանով: Վրացական արքունիք ուղարկվելիք գումարների դրամական միավորի մասին տես ՄՄ, արաբատառ ձեռագիր, թ. 233, էջ 38բ, 59ա:

[23] **Գ. ավագ քահանա Աղանեանց**, Դիվան հայոց պատմության, գք. Դ, (Ղուկաս կաթողիկոս), Թիֆլիս, 1899, էջ ԻԸ:

[24] **Գ. ավագ քահանա Աղանեանց**, Դիվան հայոց պատմության, գք. Դ, (Ղուկաս կաթողիկոս), Թիֆլիս, 1899, էջ ԻԸ:

[25] **Լ. Մելիքսեթ-բեկ**, նշվ. աշխ., էջ 179:

[26] **А. Араратян,** Жизнь Артемия Араратскаго,Уроженца селения вагаршапать близь горы Арарата, Санктпетербургь, 1813, с. 51-52.

Սարգիսջան, Շահրիարու - մելիքը՝ Յոհան, Ղուրդուղուլուն - մելիքը՝ Հարություն, Աշտարակը - Գէորգ իշխան:[27]

Վաղարշապատի բնակիչները կարողանում են փրկվել: Նրանց Սիմեոն Երևանցին ապաստան է տալիս էջմիածնի պարիսպների ներսում՝ խոստանալով Հերակլ Բ-ին վանքը չավերելու դեպքում կատարել նրա պահանջները: Հերակլ Բ-ը կաթողիկոսից մեծ չափի գումար է պահանջում, ինչը և ստանում է:[28]

Հերակլ Բ-ի կողմից Երևանի խանության բնակչությանը Վրաստան տեղափոխելը պատժիչ քայլ էր Երևանի խանի նկատմամբ, որի միջոցավ նա կարողացավ թուլացնել Երևանի խանի դիրքերը: Երևանի խանությունը տնտեսական մեծ վնասներ կրեց և Հուսեյն Ալի խանը երկրում ստեղծված ծանր դրությունը փոխելու միջոցը տեսնում էր Վրաստան տարված բնակչության վերադարձի և ամայացած գյուղերը նորից բնակեցնելու մեջ: Ուստի նա իր մեծ որդուն ընծաներով ու մինչև անհնազանդությունը տրվելիք հարկով ուղարկում է Հերակլ Բ-ի մոտ և վերջինիս խնդրում թույլատրել գերեվարված բնակիչներից ցանկացողներին վերադառնալ իրենց տեղերը՝ նախկինի նման վրաց թագավորին հարկատու մնալու պայմանով:[29] Սակայն հաշտությունը չի կայանում: Հուսեյն Ալի խանը Հերակլ Բ-ի մոտ բանակցելու համար իր կնոջն է ուղարկում: Վերջինս թագավորի հետ հանդիպելուց հետո լուր է ուղարկում, որ հաշտության և գերեվարվածներին ետ ուղարկելու համար անհրաժեշտ է հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու (1780-1799թթ.) միջնորդությունը: Խանի խնդրանքով Ղուկաս Կարնեցին 1780 թ.-ին Գալուստ վարդապետի հետ մի նամակ է ուղարկում Հերակլ Բ-ին և խնդրում հաշտվել:[30] Հերակլ Բ-ը հրամայում է, որ գերեվարվածներից ով կամենում է, կարող է վերադառնալ: Սակայն տեսնելով, որ բոլորը շտապում են վերադառնալ, հրամայում է, որ *«առ օրին զկամուրջ քաղաքին, որ փայտայարկ է քակել, որպեսզի զի և այնոսիկ արգելցէ*

---

[27] Ցիշատակարան, Ազգային արդեան պատմության համար, Յաղագս դիմելոյն Հերակլայի պատերազմ Երևան, և արտասահման առնելոյ զքանի գեօղօրեայն Հայոց յԱրարատու: Կոունկ Հայոց աշխարհին, Տփխիս 1862 թիվ, էջ 280:

[28] **Ա. Արարատյան,** Указ. соч., ст. 55.

[29] Ցիշատակարան, Ազգային արդեան պատմության համար, Յաղագս դիմելոյն Հերակլայի պատերազմ Երևան, և արտասահման առնելոյ զքանի գեօղօրեայն Հայոց յԱրարատու: Կոունկ Հայոց աշխարհին, Տփխիս 1862 թիվ, էջ 281:

[30] **Վ. Գրիգորյան,** Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում, Երևան, 1958, էջ 70-71:

փուրթալ»: Այսպիսով Երևանի խանություն է վերադառնում բնակչության մի մասը:[31]

1784 թ.-ի նոյեմբերին մահանում է Երևանի Հուսեյն Ալի խանը, որից հետո Երևանի հայ հոգևորականությունը և քաղաքի ավագանին պատվիրակություն են ուղարկում Հերակլ Բ-ի մոտ՝ Հուսեյն Ալի խանի ավագ որդուն՝ Ղուլամ Ալի խանին, որի մայրը Հուսեյն Ալիի առաջին կինն էր, որպես խան հաստատելու համար:[32] Չնայած Հերակլ Բ-ի կողմից հաստատված լինելուն՝ Ղուլամ Ալի խանը իշխանության գալուն պես սկսեց կապեր հաստատել թուրքական իշխանությունների հետ և քայլեր ձեռնարկել Հերակլ Բ-ի ազդեցությունից դուրս գալու ուղղությամբ: Ռուսական իշխանությունները Հերակլ Բ-ի հետ սկսում են միջոցներ ձեռնարկել Երևանում թուրքամետ ուժերը ճնշելու համար: Ղուլամ Ալի խանը 1784 թ.-ի հունիսի 7-ին դառնում է դավադրության զոհ:[33] Ղուլամ Ալի խանին փոխարինում է Հուսեյն Ալի խանի կրտսեր որդի Մահմեդը, ում մայրը Հուսեյն Ալի խանի երկրորդ կինն էր: Նոր խանին հաստատելու համար Երևանի մեծամեծերը դիմում են Հերակլ Բ-ին: Վերջինս հաստատման թուղթը արքայազն Գեորգիի հետ ուղարկում է Երևան:[34] Ղուլամ Ալի խանի կողմնակիցները, դժգոհ լինելով նոր խանից, մի շարք քոչվոր ցեղերի գլուխ անցած՝ ապստամբում են նրա դեմ և սկսում են ավերել խանության գյուղերը: Այս ավերածություններից տուժում է նաև խանության հայ բնակչությունը: Նման խառնակ ժամանակաշրջանում Ղուկաս Կարնեցին մի շարք քայլեր է ձեռնարկում խանության տարածքում խաղաղություն հաստատելու ուղղությամբ: Հայոց կաթողիկոսը, պաշտպանելով նոր խանին, փորձում է համոզել ապստամբներին ենթարկվել նոր խանին: Սակայն սկզբում Ղուկաս Կարնեցին այս գործում հաջողություններ չի ունենում: Երևանցիները դիմում են Հերակլ Բ-ին և վերջինս խոստանում է ապստամբների չհնազանդվելու դեպքում օգնել և նրանց դուրս հանել խանության տարածքից: Հերակլ Բ-ի նոր արշավանքը դառնալու էր նոր մեծ ավերածությունների ու թալանի պատճառ: Ուստի Ղուկաս Կարնեցին

---

[31] Ցիշատակարան, Ազգային արդեան պատմության համար, Յաղագս դիմելոյն Հերակլայի պատերազմ Երևան, և արտասահման առնելոյ զքանի գեօղօրեայն Հայոց յԱրարատու: Կոունկ Հայոց աշխարհին, Տփխիս, 1862, էջ 281:

[32] **Մ. Нерсисяна**, Из истории русско-армянских отношений, книга первая, Ереван 1956,с. 267.

[33] **Վ. Գրիգորյան,** Դիվան հայոց պատմության, նոր շարք, գք. առաջին, Ղուկաս Կարինեցի, հտ. Ա, 1780-1785, էջ 13:

[34] **Վ. Գրիգորյան,** Երևանի խանությունը 18-րդ դարի երկրորդ կեսին, էջ 89:

շարունակում է ջանքեր գործադրել երկրում խաղաղություն հաստատելու ուղղությամբ: Նա կարողանում է ապստամբներից Շամտին աղային համոզել վայր դնել զենքը և վերջինս ընդունում է նոր խանի իշխանությունը: Սակայն Շամտին աղան մերժում է խանի բերդ ներկայանալու առաջարկը և իր եղբորը՝ Ահմատ աղային, ուղարկում է Էջմիածին, որպեսզի այստեղից նա ուղևորվի Երևանի բերդ: Էջմիածնից Երևանի բերդ ուղարկված նամակից հետո Ահմատ աղան ուղևորվում է բերդ և խանի ու նրա մոր կողմից ջերմ ընդունելության արժանանում:[35]

ԱյսպիսովXVIII-րդ դարի 2-րդ կեսին Էջմիածնի կաթողիկոսները, անմասն չմնալով տարածաշրջանում ընթացող կարևոր գործընթացներից, կարևոր դեր էին խաղում Երևանի խանի և Հերակլ Բ թագավորի միջև փոխհարաբերություններում, նաև խանության ներսում ծագած խնդիրների կարգավորման հարցում: Հայոց կաթողիկոսները, ունենալով մեծ հեղինակություն և տնտեսական կարողություն, կարողացան ակտիվ գործունեություն ծավալել և խառնակ ժամանակաշրջանում Երևանի խանությունը որոշ չափով ավերածություններից զերծ պահել:

Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող 16A-6a32 <<Երևանի խաների նամականին և Մատենադարանի պարսկալեզու վավերագրերը, որպես Արևելյան Հայաստանի 18-րդ դարի երկրորդ կեսի պատմության սկզբնաղբյուր>> գիտական թեմայի իրականացման շրջանակներում:

Վ. Հակոբյան

Էջմիածնի կաթողիկոսների դերը Երևանի խանության XVIII դարի 2 -րդ կեսի քաղաքական անցուդարձում

Ամփոփում

18-րդ դարի երկրորդ կեսում Հարավային Կովկասում իշխող տիրակալներն ուժեղ կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում պարբերաբար պատերազմում էին միմյանց հետ: Նման հանգամանքներում մահմեդական խաների տիրապետության ներքո գործող հայ կաթողիկոսներն ակտիվ գործունեություն էին ծավալում հայությանը հնարավոր ավերածություններից զերծ պահելու համար՝ հաճախ հանդես գալով որպես միջնորդ հակամարտող կողմերի միջև: Էջմածնի կաթողիկոսների նման քաղաքականությունը պայմանավորած

[35] **Վ. Գրիգորյան,** Դիվան հայոց պատմության, նոր շարք, գք. առաջին, Ղուկաս Կարինեցի, հտ. Ա, 1780-1785, էջ 484:

էր տարածաշրջանում հայության ունեցած դերով. մեծ էր հայերի թիվը տարբեր տիրակալների զորքերում, հայերը կարևոր դիրք էին զբաղեցնում Հարավային Կովկասի տնտեսությունում: Այդ իսկ պատճառով երկրամասի առաջնորդները հաշվի էին նստում Էջմիածնի կաթողիկոսների հետ, որոնք, որպես հոգևոր առաջնորդ, մեծ ազդեցություն ունեին հայության շրջանում:

В. Акопян

Роль католокосов Эчмиадзина в политических событиях Ереванского ханство второй половины 18 века

Резюме

В середине 18 века на Южном Кавказе отсуствовала обьеденённая сильная власть, по этой причине различные правители региона постоянно воевали друг с другом. В этих условиях католикосы Армении, живущие под властью мусульман, вели активную деятельность для сохранения нации от уничтожения. Именно поэтому они часто выступали в качестве посредника между различными правителями с целью предотвращения столкновений между ними. Такая политика Эчмиадзинского католикоса была подкреплена ещё и тем, что армяне играли важную роль в регионе: большое количество армян служило в войсках у различнйх ханов и князей, армяне занимали ключивое место в экономике Южного Кавказа. Следовательно местные правители считались с мнением Эчмиадзинских католокосов, которые как духовные лидеры армянского народа имели сильное влияние на него.

V. Hakobyan

The role of the Catholicoses of Echmiadzin in the political history of Yerevan khanate in the second half of 18th century

Summary

In the middle of 18 century, there was no united strong power in the South Caucasus, which leads to wars between different rulers of the region. The catholicoses of Armenians under Muslim rule tried to keep away the nation from destruction. That is why they often carried out intermediary activities between different rulers in order to prevent clashes between them. The authority of the Catholicos of Echmiadzin was also conditioned by the role of Armenians in the region: ‘as well as in the khans’ troops and the key role of Armenians in economic of South Caucasus. Consequently, the activities often associated with Armenian nation could not ignore the Catholicoses of Echmiadzin not only the religious heads but also the spiritual leaders of the Armenian people in the absence of state.